ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհրդի

25.12.2019թ. արձանագրությամբ

«ՍԳԿԿ» ԻԿԿ
Դիտորդ խորհրդի նախագահ
Ա. Չիտչյան _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Ընդհանուր ժողովի

08.02.2020թ. որոշմամբ

«ՍԳԿԿ» ԻԿԿ նախագահ
Ա. Չիտչյան _____

ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ, ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԿԱՐԳ /փոփոխված/

Հայաստանի Հանրապետություն
քաղաք Երևան

2020թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.ՀՀ օրենսդրության, «Սնանկության մասին» ՀՀ օրենքին համապատասխան, Անդամավճարների, մուտքի և այլ վճարների չափերի ու վճարման վերաբերյալ կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության անդամների կողմից վճարվելիք անդամավճարների, մուտքի և այլ վճարների իրականացման չափը, կարգը, ժամկետները և պայմանները:

1.2.Սույն կարգի նպատակներն են՝

- Կանոնադրությամբ սահմանված կարգով կազմավորել Կազմակերպության սեփականությունը,
- սահմանել Կազմակերպությանը վճարվելիք անդամավճարների, մուտքի և այլ վճարների իրականացման չափը,
- սահմանել Կազմակերպությանը վճարվելիք անդամավճարների, մուտքի և այլ վճարների իրականացման ժամկետները և դրանց հաշվարկման կարգը,

1.3.Կազմակերպության գործունեությունն իրականացնելու համար նրա անդամները պարտավոր են վճարել՝

- մուտքի վճար,
- անդամավճար:

1.4.Կազմակերպության սեփականությունը գոյանում է նաև դրամաշնորհներից, նվիրատվություններից և Օրենքով սահմանված կարգով իրականացված այլ գործունեությունից, այդ թվում օտարերկրյա աղբյուրներից: Կազմակերպության անդամների կողմից սեփականության իրավունքով Կազմակերպությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը Կազմակերպության սեփականությունն է:

1.5.Կազմակերպությանը վճարվելիք անդամավճարները, մուտքի և այլ վճարները սնանկության գործով կառավարիչները իրականացվում են կանխիկ ձևով կամ Կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

2. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՎՃԱՐԵԼՈՒ ՉԱՓԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2.1.«ՍԳԿԿ» ԻԿԿ-ին անդամակցելու համար անդամության թեկնածուները պարտավոր են Կազմակերպության բանկային հաշվին փոխանցել կամ կանխիկ վճարել՝ Ընդհանուր ժողովի կողմից հաստատված մուտքի վճարը, որը կազմում է 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2.2.Մուտքի վճարի վճարումը կատարվում է Կազմակերպությանը անդամակցելու վերաբերյալ դիմումը ներկայացնելուց առաջ:

2.3.Կազմակերպության անդամակցությունը կամավոր դադարեցնելու կամ անդամին ընկերությունից հեռացնելու դեպքում նախապես վճարված մուտքի վճարը և անդամավճարներ ենթակա չեն հետ վերադարձման:

2.4.Այնպիսի դեպքերում, երբ Դիտորդ խորհուրդը որոշում է կայացնում Կազմակերպությանը անդամագրվելու դիմումը մերժելու վերաբերյալ, նախապես վճարված մուտքի վճարը վերադարձվում է դիմումատուին՝ որոշման ընդունման պահից մեկամսյա ժամկետում, նրա կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.5.Կազմակերպության անդամները պարտավոր են վճարել Ընդհանուր ժողովի կողմից հաստատված անդամավճար, որը կազմում է ամսեկան 10.000 (տաս հազար) ՀՀ դրամ: Անդամավճարի վճարումը կատարվում է անկախ սնանկության գործով կառավարչի վարույթում գտնվող վարույթների քանակից:

2.6.Դիտորդ խորհրդի կողմից սահմանված դրամական տույժերը վճարվում են Կազմակերպության կանոնադրության, Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգով նախատեսված դեպքերում և կատարվում են կանխիկ կամ Կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3. Ուժը կորցրած ճանաչել:

4.ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԵՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1.Կազմակերպության անդամները, ինչպես նաև ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձինք իրավունք ունեն ֆինանսական աջակցություն ցուցաբերել

Կազմակերպությանը, որը կարող է իրականացվել գույքի անհատույց փոխանցման, ծառայությունների մատուցման կամ նվիրատվության միջոցով:

Նվիրատվությունների և ֆինանսական աջակցությունների արդյունքում գոյացած գումարները կամ այլ նյութական միջոցները հանդիսանում են Կազմակերպության սեփականությունը և օգտագործվում են միայն Կազմակերպության նպատակների իրագործման համար:

4.2.Բացառիկ դեպքերում Դիտորդ խորհրդի կողմից կարող է որոշում կայացվել Կազմակերպության անդամներին անհապաղ ֆինանսական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ: Ֆինանսական աջակցության տրամադրման չափը և կարգը որոշվում է Դիտորդ խորհրդի կողմից:

4.3.Կամավոր նվիրատվությունները և ֆինանսական աջակցությունը չեն կարող համարվել որպես մշտապես վճարվող անդամավճարներ:

5. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ, ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

5.1.Կազմակերպության համապատասխան մարմինները իրավասու են վերահսկողություն իրականացնել անդամների կողմից անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների նկատմամբ: Կազմակերպության մարմինները կարող են իրականացնել ստուգումներ և ճշտել փոխանցված վճարների չափը:

5.2.Վերահսկողությունն իրականացնելու նպատակով Կազմակերպության համապատասխան մարմինները իրավասու են սնանկության գործով կառավարիչներից պահանջելու անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

5.3.Եթե կառավարիչը ներկայացնում է սխալ կամ ոչ ճշգրիտ հաշվետվություն, որը նվազեցնում է նրա կողմից վճարվելիք գումարների չափը, դա հանգեցնում է կառավարչի նկատմամբ կարգապահական պատասխանատվության:

5.4.Եթե կառավարիչը իր ներկայացրած փաստաթղթերում հայտնաբերել է ոչ ճշգրիտ տվյալներ կամ անհամապատասխանություններ և միջոցներ է ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ, ապա վերջինս ենթակա չէ կարգապահական պատասխանատվության:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1.Կազմակերպության անդամի կողմից իրականացվելիք վճարումների պարտավորությունների պարբերական խախտումների /եռամսյակում՝ երկու անգամից ավելի/ առկայության դեպքում Գործադիր տնօրենը իրավասու է դիմում ներկայացնել Կարգապահական հանձնաժողովին, որը Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով հարուցում է կարգապահական վարույթ:

6.1.2.Սույն Կարգով հաստատված անդամավճարները, մուտքի և այլ վճարները սնանկության գործով կառավարիչների կողմից չկատարելու դեպքում, դրանց բռնագանձումը կատարում է դատական կարգով:

6.2.Կազմակերպության անդամակցությունը կամավոր դադարեցնելու դեպքում կառավարչի դիմումի հետ միաժամանակ Դիտորդ խորհրդի կողմից քննվում է նաև Կազմակերպության հանդեպ նրա դրամական պարտավորությունների առկայությունը: Այնպիսի դեպքերում, երբ կան անդամավճարի կամ այլ վճարների պարտավորություններ, անդամակցության դադարեցման հարցը կասեցվում է՝ մինչև այդ պարտավորությունների կատարումը:

6.3.Այնպիսի դեպքերում, երբ սնանկության գործով կառավարչի իրավասությունները դադարեցվում են կառավարչին առաջադրվող պայմանների անհամապատասխանության, կարգապահական պատասխանատվության կամ որակազրկման հիմքով, անդամավճարների կամ այլ վճարների բռնագանձումը կատարվում է դատական կարգով:

6.4.Սույն Կարգը ուժի մեջ է մտնում Կազմակերպության Ընդհանուր ժողովի կողմից հաստատելու պահից: